7. ԶԱՐԶԱՆԴ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

Կէղնի չէղնի՝ մէ աղքատ մարդմ կէղնի։ Էս մարդը էսոր-էնոր դուռը մշկութեն, յա իրղտութեն էնելով, կնիկն էլ աղչուութեն էնելով իրանց ու մեկուճար տղի՝ Զուրապի օրական ապրուստը անճախ անճախ կհասուին։

Զուրապի հերը մշկութենի տեղը ղընկնի բարձուի սելի տակ, գլոխ-մլոխը կըփրթխի, ամիսմ քաշելեն հ՚ետև կմեռնի։

Զուրապը չորս տարեկան էր, որ հերը կմեռնի։ Մերը էլի իրան աղչուութենը էնելով էս ու էն դրկցի գոմը հ՚իստրկելով, յա խնոցին հարելով, հացեն է, թե թան ու թացանեն կ՚հասուր՝ տղին կպահեր։

Էսման մէ քանիմ տարի անցավ, գեղը շոպա ընկավ, գեղեն մէ 25—30-ի չափ մարդ մեռան՝ չունքի ոչ դեղ կար գեղանը, ոչ էլ դոխտուր։ Էդ շոպի տարին Զուրապի մերն էլ մեռավ, ինքը մնաց եթում։ Դրկցներեն մեկը, հալը լավ էր, մալ ու ոչխարի տեր էր, մէ թարաֆեն խղճաց եթում էրեխին, մէ թարաֆեն էլ միտք էրավ՝ օր էրեխեն ինը տարեկան է, թե հաց էլ կերցու նա, կրնա հորթ ու գառ արծցու, էս մտքով էլ Զուրապին վերցուց տարավ իրանց տուն. ղաթի եթում էրեխի մերը մէ աչք քոխոտիկմ ուներ, բըլբլե, բանի պետք չէր, էն էլ խառնեց իրան բախչին։

Զուրապին վերցնող էս դրկցին չորս-հինգ մատղաշ հորթ ուներ, ամեն օր եթում Զուրոն (մոր մեռնելեն ետև տղին ըտման կկանչեին)[1]

[1] Ասացողի բացատրությունն է (Մ. Կ.)։

էդ հորթերը կտաներ կալերը կարծցուր, կբերեր. տղեն շատ աչքարաց տղա էր։

Եթում Զուրոն օր կ'դառնա 12 տարեկան, արթղ կղրկեն դառներն արծլու։ Եթում Զուրոն հ'իրան տարիքի չափ բոյ չուներ, թիզ ու կես՝ գետնի դղեղ—ինչրխ որ մեր դեղը կսեին, հըմը յաման ուժ ուներ հոր պես։ Գեղի տղոնց հետ օր դյուլաշ կ'կպնեին, հ'իրանից 4—5 տարով վենձ էրեխոնցը հասնելն ու գետին զարկելը մեկ կէզնիր։

Գառ արծլու տեղը օրմ գելը գընկնի դառներու մեջ։ էդ սհաթին էլ Զուրոն պաշի տակը նստե իրան հմար դինջ հաց կուտե։ Գելը գառմ կ'բռնե ու կ'փախցու. դեմեն հոտղներն ու շները գիլու հ'առաջն օր կ'կտրեն, գելը ետ կ'դառնա ու պաշեն իրան կքցե՝ հըմը Զուրոյի առաջը դընկնի. ընչարի գելը կշիտկի օր փախնի, Զուրո դու Զուրո ես, թոնի ու չոքի գիլու բկին։ Տասը գախա չ'ընցած գելը խեխտուկ քցուկ էր դետին։ Հոտղներն էս օր տեսան, հ'ամենքը մե թարաֆեմ կ'ըսեին.— Տո Զուրո, էս ի՞նչ է,— մեկը կ'ըսեր,— գելխե՞ղդ ես,— մեկելը կըսեր.— ա՞ըշ ես տո,— մե քանիսն էլ թե,— ասլան է, ասլան,— ու էնտից ետև անունը կնքին Եթում Ասլան։

Եթում Ասլանը դարձեր էր 21 տարեկան։ Խազեինը էսոր դարձուց իրան ոչխրներու չոբանը։ Ասլանը հեչ բանեմ վախ չուներ, հ'իրկընները ոչխարը կտաներ դեղեն 3 վերս հեռու ձորի զաղեն, շները կ'պարկըցուբ զադի դռնեն դուս, ոչխարը կեներ զաղեն, ինքն էլ կպառկեր ղռան վրեն, ոտները դեմ կեներ դռան մե սովին, գլոխը՝ մեկել, հաց ու ջրի ամանն էլ կ'կախեր գլխու վերևեն ու դինջ կքներ։

Օրերևն մե օրմ էս Եթում Ասլանը կարծիքի տակ գընկնի—կըսես թե իրան հացին ու ջրին գիշերը ձեռք տվող է էղե։

Էսման կարծիքի տակ խելիմ դուշումիշ կէղնի. «Հըմը չէ,—կըսե ինքն իրան,— շները դուռը պառկուկ, ոչխրներն էլ խուրջինին չեն հասնի՝ վո՞վ պտի ձեռ տա»։

Կընցնի քանիմ օր, էդ օրը իրան աղի կնիկը մե բաղաջմ ու չորս հատ հավկիթ էր բաժին դրե Ասլանին։ Էս մարդն էլ ինչխօր կար՝ էդ բաղաջն ու հավկիթները խուրջինով իրկունը կկախե գլխու վերևը, սապախտան գելնի կ'տեսնի օր բաղաջի կեսն ու 2 հավկիթը չկա. «Այ հիմի կա ու չկա,— կըսե,— գիշերը էստեղ մեկմ կա իմ հաց ու ջուրս ընձի հետ կիսողդ»։

Էս օրը Ասլանը չի դինջանա, սապրը չի տանի թեզ-թեզ արևին կաշե, թե եփ պտի մութն ընկնի, որ ոչխարը տանի զաղեն ու տեսնի, թե գիշերը էդ վո՞վ է որ անվախ գուքա իրան հացը կկիսե։

Գեղդան գեղ օրը մթնավ, Եթում Ասլանը ոչխարը հավար-հավար քշեց էրավ մաղարեն. քեչա-կուլլամբը գլխուն քաշեց ու սուտ քուն էղավ, քեչի տկեն կ'ծկլատե։—Բիրդան թե օր չարք-սատանա էղավ.— կանցնի Ասլանի մտքեն,— էհ, էղավ, էղնի, էն վախտ, մորս սորվցուկ աղոթքը կըսեմ, սատանեն անդունդ գիջնի։

Էսման խելի վախտ ընցավ, բան չ'էրևաց, ձեն ու ձուկ չկա, էլի խելի ընցավ, էն է Ասլանի աչքերու տերը էկեր էր՝ պտի քներ, մեկ էլ հ'անկջին խշխշոցմ դիպավ, քունը խրտավ։

Մեկ էլ Ասլանս ի՞նչ տեսնի, էրնեկ տեսնողի աչքերուն, մե ջահ-ջահել աղջիկմ, կէղնի 16—17 տարեկան, ա.լջիկ մի ըսէ, մե ջեյրանըմ, մէ հուրի մալաքմ, օր արևին կ'ըսե՝ դու մի ելնի, իմ լուսեղեն երեսըս աշխրքին լուս կուտա, էլ ինչըխ թարիֆն էնեմ՝ չուտես չխմես, էնոր հուր ջամալին թամաշա էնես։

Թե հեքյաթս լսողը ջահել տղա է, թող թուքը կուլ տա։

Էս օր կ'տեսնի Ասլանս, քիչ կմնա խելքը գլխեն թռու, գուզն աղջկան փաթթըվի, հըմը անջախ-անջախ իրան կզավթե։

Աղջիկը, խուրջինը կախած տեղեն գիջու, ջրեն կխմե, հացեն էլ իրան փայը կ'կտրե, դառնա կէրթա օր մտնի ղաղի պատի մեջ— հ'ուրտից օր էկեր էր, հըմը էդ դախին Ասլանը կ'փաթթվի աղջկա վիղը ու կըսե.— Ախր դու ո՞ւր կէրթաս, ջեյրան ջան, դու իմ ղըսմաթն ես օր կաս։—Աղջիկը կդառնա, շատ աղաչանք-պաղատանք կէնե տղին թե. «Թող տղա, ընձնեն քեզի խեր չի գա, քեզի փորցանքի մեջ կ'քցես», Ասլանը թե. «Քեզի հըմար թող կյանքս էլ ղուրբան էղնի, ես հեչ մե բանեմ էլ չեմ վախենա՝ թաքի քովս կեցի, իմս էղի»։

Էս անուշ խոսքերը աղջկա ջիգրները կկարտեն, դառնա տղին կ'ըսե.

— Դու լավ հ'անկաջ էրա, էստից օխթը սար էնդին շատ զորեղ թագավորմ կա, անունը Զարզանդ, էդ թագավորեն կվախենային—կդողային թագավորները բիրադի։ Էգ թագավորը իմ հերս է։ Մի անգամ էստից մե 4—5 ամիս առաջ (հաշիվն էլ խո կորուցեր եմ) հորս վրեն օխտը թագավոր կռիվ ելան, հերս ղոշունը քաշեց, դնաց էն թագավորներու վրեն կռիվ, էրկու ախպերս մնացին երկիրը կառավարելու։ Հըմը էդ խառնվուկ վախտը իրեք գլխանի թափագյող դևը վեց ախպրով քշեն դուքան, օր ախպրտանցս հետ կռվեն ու ընձի փախցուն տանին։ Ախպրտանքս քիչ ու միչմ էլի ղոշուն թոփ էրին ու ելան էս վեց դևերու դեմ կռվելու։

Տաս օր զարկին-զարկվան, տասնումեկ օրվա վրա չորս դևերուն

փչացուցին, հըմը իմ վենձ ախպերս էլ սըպանվավ։ Վրա տասնիրեք օրը պզտի ախպերս ու մե դեն էլ սըպանվան, մեր ղոշունեն էլ ջատ ջարդվան, ախպրտանքս էլ օր չկային, մեր ղոշունը թողեցին ու ցըրվան հ՚իրանց տները։

Թ՚ափա-դյող դեր, օր ըիրադոնց վենձն էր ախպրտոնց մեջ, ընձի վերուց տարավ իրան երկիրը։ Եփ օր հասանք դևի բերդը, ինչըխ օր իրանք կ՚ըսեն, ընձի ըսավ օր. «Ախչի, դո՛ւ էլ հիմի տեր ու տիրական չունիս, հիմի քիզի ի՞նչ ուզենամ կէնեմ. անսաս խելոքցի, ես քեզի աչքիս լսի պես կպահեմ»։ Ես հակառակվա՝ չուզեցի դևին, օր իմ նշանածս էղնի։ Էնման քառսուն օր դևը կաղաչեր, ոտներս գ՚ընկներ, կ՚համոզեր, բաղի բազի էլ ահ կուտար, հըմը «չեմ հ՚ուզե» ըսի ու կայնա իմ խոսքինւ Քառսուն օրվա վրա էս դևը հ՚ընկնավորավ— փոփուռը տվեց բերնին, թափի վրեչի թաք աչքը վենձցավ, դարձավ վենձ ձմերուկիմ չափ. ընկավ գետին, կծեծկըվեր ու իմ անունս կուտար. «Սիմիզար ջան, Սիմիղար ջան»։

Դևի քյավթառ մերը, օր աճեպ բանմ էր, հ՚ադռեքը կռճտցուր կը վյիես, աչքերը կ՚խոլըրացուր, դուզեր ընձի կտոր-կտոր էնե, եփ օր կտեսներ տղի էղման չարչարանքը, հըմը տղից շատ կքաշվեր։

Իրեք օր դևը էդ հալին մնաց, իրեք օրեն ետև ուշքը գլոխն էկավ, էլի քառսուն օր ըդման աղաչանքն ու յալվարն ընկավ, էլի քառսուն օրեն ետև ընկնավորավ։ Իրեք օր ետև, ուշքը գլոխն օր էկավ, կանչեց մորն ու ըսավ. «Էս խսանի լակոտին տար աչքես հեռեցու, հըմը, տե՛ս, չվնասես»։ Դևի քյավթառ մերը ջադուքյար էր, բոիկ էնելու ուստեն էր. չիտեմ ինչըխ էրավ օր, աչքս մեկ էլ բացի օր, էս զաղի մեշն եմ։ Քյավթառը ձեռը բռնուկ կանանչ ճուղքով իրեք անգամ էս քարփին զարկեց ու ըսավ. «Քա՛ր, տեղ տու էս թագավորի աղչկան, էնքան վախտ պահե ընչարի ծիծռնակը էսոր տանող տղին ճամպեն խրատ կուտա, էնման իրեք անգամ կզարկեն, բա՛ց ու իրան տիրոշը տուր, հըմը հ՚էդուցվընեն կես գիշերներուն, օրը մեկ անգամ բացվի՝ թող քիշմ ման գա»։

Ահան, չոբան, իմ պատմութենս, թող հիմի ես էրթամ իմ մութ ու խավար բունս. դու էլ, թե ըսածիդ պես ընձի կսիրես, գնա ման արի դտի էն ծիծռնակներուն, որ ընձի ազատելու ճամպեն գիտեն։

Տղեն թողեց աղջկան, ու ինքը ընկավ վենձ մտքերու մեշ։

Հ՚եքսի օրը սապախտան, օր լուսը բացվավ, խերն ու բարին բացվի ձեր վրեն, Ասլանը օչխարը թոփ էրավ ու շիտակ քշեց խազեինի դուռը։ Էնման բեվախտ օչխրի տուն բերելը խազեինին զարմացուց։ Ասլանը աղին խնդրեց, օր իրան ինչ օր հախ կհասնի տա,

էլ չի ուզե չոբնութեն էնե։ Աղեն շատ չարչրվավ օր համոզե եթում Ասլանին, հրմը հեչ իլլաջ չէղավ, հախը տվեց ու ճամպու դրավ։

Ասլանը դեղեն դուս էկավ, կայնավ, իրեք ճամպու վրա ու մոլորավ թե ո՞ման էրթա։ Շատ միտք էրավ, մոր աղոթքը միտքն ընկավ, «Հայր մեբմ» ըսեց ու մտքի մեշ ըսավ. «Ի՞մ անուշ հոր ու մորս աստված, աչքերս խուփ դագյանակս ֆըռռըցնելով վերև կըքցեմ, շատ մուննաթ կենեմ-կաղաչեմ, ո՛ր ճամպեն օր բարի է, դագյանակս քցե էն ճամպու վրեն»։

Էս ըսելով Ասլանը դագյանակը կ'լորդե վերև, աչքերը կբանա, կտեսնի դագյանակը օրթըլղի ճամպու վրեն էդ ճամպեն էլ բռնե ու կէրթա։ Կէրթա, կէրթա շատ ու քիչն աստված գիտե, իրիկվա մթնշաղին կհասնի մե գեղիմ։ Ղարիբ գեղ, տեղ չունի, ծանոթ չունի հ՞ո՞ւր էրթա։ Բիրղան Ասլանի միտքը գընկնի, որ ախր հ՞ինքը էն ծիծռնակներուն ման գուքա, որոնք օր իրան սորվցուն պտի հնարը՝ թե ինչըխ աղատե Սիմիղարին։

Ասլանը կընցնի էս տան կողքով, էն տան հ՞առջևեն, շատ թայմինով կաշե թե հ՞ո՞ւրտեղ ծիծռնակի բուն կտեսնի։ Ըսման կանցնի շատ տներու քովեն, բան չի թայմնե. մեկ էլ կհասնի գեղի ղրաղը մե պզտի տանմ հ՞առջև, տեսնի կը, ահան, մե ծիծռնակմ էդ տան դըռնեն գելնի ու էլի նես կմտնի. կզարմանա, օր էս բեվախտին ծիծըռնակը դուս ու ներս կէնե, կըսե. «Վալլահ, բլքի բարին էս է, ըստեղ՝ էս տունն էրթամ խնթրեմ՝ գիշերմ բլքի տեղ տան, չուրի տեսնինք աստված ինչ ճամպա կ'բանա հ՞առջևս»։ Ասլանի բախտեն տան դուռը բաց էր. կմոտենա, կաշե օր պառավմ ճրագը կվառե, կըսե.— Բարև նանե։

Կըսե.— Ասսու բարին, նանեն քեզի ղուրբան էղնի,— շուզաբ կուտա պառավը։

— Նանե,— կըսե, Ասլանը,— ղարիբ տղա եմ, ըստեղ տես ու ճանանչ չունիմ, չէ՞ղնի օր էս գիշեր ընձի ղոնախ էնես։

— Ղոնախն ասսունն է ղուրբան, նես համմեցի։

Պառավը, ինչքան ձեռնեն գուքար, ղոնախին հաց ու մաց կկերցու, քնելու վախտը գուքա, գողինք կքցե ղոնախի համար, ու ինքն էլ կէրթա կմտնի իրան տեղը կքնի։

Ասլանի քունը չի տանի. «Ցարաբ, աստված, իսոնք էն ծիծըռնակնե՞րն են օր Սիմիղարիս աղատելու հնարքը պտի սորվցուն, թե հըլը շատ պտի ման գամ էնոնց գտնելու համար», ըսման միտք էնելով, միտք էնելով քունը գուքա, կքնի։

Սապախտան բարի լուսու հետ Ասլանը կոյաղնա, աչքը կքցե

ծիծռնակներու բնին, կտեսնի օր էսոնք ժաժ դուքան ու ֆծլվլան, կըսե. «Աստված շան, ի՞նչ կէղնի օր ընձի շնորք տաս, էսոնց լիզուն հասկնամ»։ Էդ խոսքին ծիծռնակի մեկը կծլվլա, կըսես թե՝ էս տղեն բան կ'հասկնա. անկշները լավ կսրե ու անկաչ կէնե։

— Կնիկ,— կըսե, որձ ծիծռնակը։

— Ի՞նչ է,— կհարցու էգը։

— Էս աղին կհանչնաս։

— Կըսես թե մե տեղմ տեսեր եմ, հա՛, միտքս էկավ, զաղեն որ կէրթայինք ճիճու-միճու ժողվելու, էսի մեզի հացի փշրանք կուտար։

— Հա, զտար, եթում Ասլանն է, մեզի ման դուքա, օր խրատ տանք թե ինչրխ աղատե դևի ետիր Սիմիզարին։

— Էդ լավ է, օր հիմի է էկե, քանի մենք չենք գնացե տաք երկրները։

— Թող Ասլանն ըսման էնե,— կպատասխանե էգը,— սապախտան օր մնաս բարով կէնե մեր տան տիրոջը, իրեք անգամ ղայիմ ղայիմ պադն պառվի ձեռն ու իրեք անգամ էլ ըսէ շնորհակալ եմ, բարի նանե։ Պառավը իրան խրատ կուտա, թե ինչ պտի էնե։

Էս օր կլսե Ասլանը, ուրախութենեն չիտե ինչ էնե։

Աղոթրանն օր կրացվի թե չէ, Ասլանը վռազ-վռազ կհագնի, կտեսնի օր պառավն էլ շորերն հագեր է, կմոտենա, կըսե.— Նանե, շան, վռազն եմ, ես ճամբա պտի ընկնիմ, ձեռդ տուր ընձի, մնաս բարով էնեմ, էրթամ,— ու պառվի ձեռքը իրեք անգամ կպադե, իրեք անդամ էլ կըսե,— շնորհակալ եմ, բարի նանե։

Պառավը կպադե աղի ճակատն ու կըսե,— Հալալ էղնի քեզի եթում Զուրապ շան, իսկական ասլան տղա ջան, գնա՛, աստված քեզի մուրաղիդ կհասու, մի վախենա։

Էս կըսե, ու պառավը Ասլանին կուտա տասնուչորս հատ ֆընտղ, էրկու հատ կակալ, մե պղտլի ըշտոպովմ ջուր, շորի մեջ փաթթած բուռմ ալուր ու կ'ըսե.— Ես գիտեմ դու ուր կէրթաս,— դևի բերդը ըստից օխտ օրվա ճամպա է, էս 14 ֆընտղը կլցես ջեբդ, օրական մեկը քու ուտելիքը կէղնի։ Գեղեն օր քիչմ կհեռանաս, փոսի մեջ նստի, էս էրկու կակալը կոտրե, քեզի ինչ օր պետք է ճամբու համար էն էլ կունենաս։ Եփ օր կհասնիս դևի պալատը—բերդը, որ օխտը մզրդի խորնկութենի մե ֆորմ է, ֆորի բերնին նստուկ, զարաուլ կքաշե դեի մերը, էս տվածս ջուրը կառնիս բերանդ ու կփչես երսին օր դըմբրի. ղու կմտնիս հորը, Թափագյոզ դևը դըմբրած, քնուկ կէղնի, հըլը իրեք օր կմնա օր ղարթի, ֆորի մեջ կտեսնիս փարչի ջրի մեջ տնկած ծառի կանանչ ճուղը, առ ու դուս արի։ Էս ալուրն

էլ, թե պետք գալու էղնի, ընտեղ քեզի ըսող կէղնի, թե ինչ էնես, դե բարի ճամբա քեզի։

Ասլանի ուրախութենը էլ պատմելով չէղնի։ Ջափուկմ գեղեն ելավ, հասավ փոսը, հանեց մե ֆընտղմ ջարդեց կերավ, ինչխոր օշիարմ ուտե, էրկու օրվա անոթութենն անցավ, օր դարդեն բան չէր կերե, հանեց կակալները, մեկը ջարդեց, ի՞նչ տեսնի՝ դամրճու ձիմ, ձի կ'ըսեմ է՞, հրեղեն, մենակ թևերը մարդկանց աներևութ էր։ Էս ձին հ'իրան արծթե թամքով, սարքով կայնավ տղի հ'առջև. էս օր տեսավ Ասլանը ուրախութենեն չիտեր ինչ էներ։

Ասլանը վերուց մեկել կակալը կոտրեց, տեսավ միջեն ելավ մզրաղմ, ճոթը խալիս չալիկ, մե թուրմ, օր քսեիր պողպատը կկըտրեր, մեկ էլ մե ղալխանմ, անունը ղալխան, մարդմ տակը կտեղավորեր, էսոնց հետ էլ ձեռքմ ի՞նչրխ շոր, ի՞նչրխ շոր, էլ ըսելու բան չէր։ Ասլանը թռավ ձիու թամքին, օր ուզենար մե սհաթվամ կթռներ, աշխրքի ճոթը կհասներ, հրմը նանեի խրատեն դուս չէկավ, օխտ օր ճամբա գնաց ու հասավ դևի բերդին։

Ինչրխ օր թամպա էր էրե պառավ նանեն, Ասլանն էման էլ էրավ, մտավ ֆորը, կանանչ ճուղքը հանեց դրեց ծոցն ու թռավ Թիփու շալակը—էսման էր ձիու անունը, ու «Սիմիղարի զաղա ուրտեղ ես օր էկա»։

Ասլանը իրեք օր ճամբա կտրեց, չորս օրվա վրա, հ'իրիկվա դեմ մեկ էլ ետևեն շխկրտոցմ ելավ, ձիու գլոխը ետ դարձուց տեսավ՝ ետևեն թո՛զ ու գումանը ճամբեն բռնե, դևն ու մերը, է՛ն է կրնկկոխ հասնելու վրա են։ Ասսու հրամանով Թիփին լիզու գելնի ու կ'ըսե.— Տղա, քովիդ ալուրը քամուն տու։

Ասլանը ալուրը քամուն կուտա, քամին ալուրը կցրվե, էսոնց ու դևի արանքը աչքուխուփմ մե մեշեմ կը բուսի՝ էման սրխ մեշա, օր ճղներու արանքով ղուշն էլ չէր կրնա անցնի։ Ասլանի սոլուգն ելավ՝ դևը մնաց մեշի ետևը։

Էսման դինչ ու արխեին Ասլանը էլի էրկու օր ճամբա էկավ, մնացեր էր մե օրվամ ճամբա օր հասնիր Սիմիղարի ղազեն. Ասլանի սիրտը կթփթփար, գուզեր էդ դախին Սիմիղարի քովը էղներ, մեկ էլ հրմը էդ վախտ մե շփշվոցիմ ձեն ընկավ հ'անկաջը. ետ դառավ տեսավ, էլի դևն ու իրան մերը զիլ դուքան։ Էլի ասսու հրամանով ձին խոսաց.— Մի վախենա, կայնի դևի հետ կռվինք։

Ասլանը հ'իրան թապտիրը օր տեսավ, կայնավ ընչարի դևը հասավ։ Հասնելու պես դևը թաթը քցեց օր տղի գլխեն բռնե զարկե քարերուն, վենձ բրթուճը հ'անկաջը թողնու, տղեն մե թարաֆ ծը-

ռավ, ու դևը էդ ղրբին գիլ հ՚առաչ զընաց, քեփլտաց։ Ասլանը ետևվեն հասավ ու Թրի մե ղրբով իրեք գլխուց մեկը Թռուց։ Դևը շիտկավ էլի տղի վրեն, էստեղ ձին մե չուֆտեմ որ չ՚հասուց դևի դնչին, դևը իրան կորուց, տղեն դառավ քշեց դևի վրեն ու մե Թուրմ էլ քցեց, դևի մև գլոխն էլ կախվավ, մնաց օրտըլղի գլոխը։ Դևը կատղավ, հասավ մե վենձ ղայիմ քարմ[1] վերուց ու յալլա տղի գլխուն։ Ասլանը ղալխանը դեմ էրավ, քարը դիպավ ղալխանին ու հ՚ընկավ գետին. Ասլանը ղալխանը քցեց Թևը, մղրաղը էրկու ձեռով բռնած քշեց դևի վրեն, որ ուժով չղարկեց Թափի աչքի մեշը, մղրղի ճոԹը դևի պուճուճկեն դուս ելավ, դևը սատկավ։ Հիմի դևի մորը ման գուքա, չկա ու չկա։

Ասլանը ձին շիտկեց դեպի զաղի ճամբեն, տեսավ ճամբու վրա մե շա՛տ վենձ գյոլմ, որ քառսուն սոմար ցորեն ցանես էլի շատ քիչ է, զարմացավ, ախր ըստեղ գյոլ չկար։ Ձին էլի սասու հրամանով խոսաց ու ըսեց.— էս գյոլը դևի մոր Թուքն է, գուղեր մեր ճամպեն կտրե, որ դևը մեղի վնասեր, տիա ինքն էլ օրտակ է դարձե, կլողա, դու յալես իրեք մաղ պոկե քցե գյոլի մեջ։

Տղեն իրեք մաղը քցեց գյոլի վրա, կարմունջ դարձավ, իրանք անցան։

Ասլանը սաղ սալամաԹ հասավ զաղեն, կանանչ ճուղը ձեռը վագեց զաղի առջև, ճուղով իրեք անդամ զարկեց ու իրեք անդամ ըսավ.— Քարափ բացվի, ճամպա տուր Թագավորի աղշկան։

Քարը բացվավ, Սիմիզարը դուս էկավ ընկավ Ասլանի գիրկը, ուրախուԹենեն խելքը գնաց, գետին գլորավ։ Ասլանը աղշկա հ՚անկըշները քաշքշեց, դոշը բացեց ջուր ցանեց, չէ-չէ՝ յավաշ, յավաշ աղջկա խելքն էկավ գլոխը։

Մե սհաԹմ, էրկու օր դինջացան, տղեն իրան գլխու անցածը պատմեց։ Հիմի Թատարուք տեսան, որ էրԹան Սիմիզարի հոր քաղաքը, ըստեղ Ասլանն ըսավ,— Սիմիկ ջան, քեզի ազատողը ես չեմ, քու ազատողին որ մտհան էնենք, մուխաննաԹուԹեն կէղնի։ Քոռ ազատողը էն պտոտվ նանեն է, ըստից ետև հ՚ուր որ էրԹանք, էն էլ մեր հետ պտի էղնի։

Սիմիզարը կուրախնա էս խոսքեն։ Ձին դուս կքաշեն, Ասլանը աղջկան կառնի Թարքն ու՝ «Նանե հ՚ուրտեղ ես որ էկանք»։ Հ՚իրիկվան կհասնին պառվի տունը։ Պառավը շատ ուրախացավ Սիմիզարի ազատվելու վրա, իլլահի որ լսեց, Թե իրան էլ պտի հետները տանին ու մոր պես պահեն։

[1] Բնագրում քարմ չիք (Ծ. Կ.)։

Հ՚եքսի օրը պառավն ինչ օր ուներ չուներ ժողվոդեց ու հ՚ընկան ճամբա։ Պառավը հոժար չէղավ որ Ասլանը իրան ու Սիմիզարին ձիուն նստեցուր, ինքը ոտով էրթար, ըսավ.—Դուք հըլը ձին հեծեք,— էնոց հեծուց, ինքն էլ յայլուղը ծոցեն հանեց, փռեց ու նստավ վրեն։ Էս յայլուղը էման կէրթար օր հեչ ետ չէր ընկնի ձիուց։

Էս ճամբորդներս կէրթան, կէրթան, շատ ու քիչն աստված գիտե, կհասնին Զարզանդ թագավորի սինոռի գլուխը։

Թագավորի սինոռի գլուխը՝ սարի գլխուն բերդմ է շինած, ղոշունը իրան վենձավոբով ղարաուլ կքաշեն, օր չէղնի թե դուշման մարդիկ էս սինոռն ընցնին։

Վենձավորը վերևեն դուրբով կաշե, կտեսնի, օր իրեք հոգի սինոռին մոտեցան, դուզեն անցնին իրան թագավորի հողը։ Տաս հոգի կղրկե իրան մարդկանցեն, կ՚արգիլե։ Ասլանը գուզե օր կռվի, ղոռով ընցնին, Սիմիզարը կ՚ըսե.— Մեկ օր՝ էսոնք իմ հոր ղոշունն են, մեկ էլ օր՝ էստից ղայրի էլի էսման վեց սար էլ կա օր անցնինք, հ՚ամեն տեղ կռվով անցնենք, մե փորձանքմ էլ թե էկավ քեզի էս կռվներեն, էլ ես ընչի՞ կենդանի կմնամ առանց քեզի։

Պառավն էլ հոժար չէ կռվին, կհամոզի էս տաս մարդուն ետ կ՚ճամբե, կ՚ըսե.— Մենք ետ կ՚էրթանք, ձեր հողը չենք մտնի, եփ օր դուք հոժար չեք։

Պառավ նանեն կքանդէ հ՚իրան գլխու շալը, կփռե գետնին, կ՚ըսե.— Դուք ձիուն նստեք, ձին կայնի շալի վրա, շալը կթռցու վերևանց կտանի, ես էլ յայլուղիս կնսամ, կէրթանք խնամի թագավորի երկիրը։

Ձին լիզու կառնի, կ՚ըսե.— Ձէ մերս, դու ու խանումս նստեք շալին, Ասլան աղես էլ իմ թամքին, աստված ընձի էլ թռնելու թևեր տվեց, կթռնիմ,— էս ըսավ ու թևերը բացեց։

Ըդման էլ էրին ու թռան, էկան թագավորի քաղքի քյանարը իջան։

Ասլանը ուզեց օր էրթա թագավորի պալատը իմացում տա, որ Սիմիզարը էստեղ է, աղջիկը չի թողնի, կ՚ըսե.— Մեր նազիր վազիրի տղեքն էլ իմ վրա հ՚աչք ունեին, օր հ՚իմանան, թե դու ընձի բերեր ես, քեզի կվնասեն։

Պառավն ըսավ.— Դուք դինջ ձեր տեղը նստեք, ես կէրթամ ու ինչ օր պետք է կ՚էնեմ։

Սիմիզարը պառվին օսկե ռամկի մեջ գրած մոր պըզտըլի պատկերքը տվեց ու ըսավ.— Թե չավտնան, էս պատկերքը նշանց տուր, մեկ էլ մորս սիրած ու իմ երգած էս երգը երգե «Իմ հեր զորեղ ամեն-

քեն, իմ մերն անուշ ամենքեն», էս էլ հերիք է օր մորս ակուշկի տակ երդես, թե օր քեղի նես չթողնին։

Պառավը կէրթա, շիտակ կնստե թագավորի խնամաքարին։ Մարդ գուքա պալատեն, կ'հարցու.— Ի՞նչ գուզես պառավ։

Կրսե.— Էկեր եմ թագավորի աղջիկն հ'ուզելու իմ տղին։

— Ախր թագավորն աղջիկ չունի։

Կ'ըսե.— Ունի, ունի, դուք ընձի տարեք յա թագավորի, յա իրան կնկա քովը։

Թագավորին իմաց կուտան, կըսե.— Վով գիտե, գարդեն խելքը թոցուցած կնիկ է։

Պառավը կտեսնի օր չեն ներս թողե, ձենը կքցե ու կերգե աղջըկա սորվցուցածը՝ «Իմ հեր զորեղ ամենքեն, իմ մերն անուշ ամենքեն»։ Էս ձենը գընկնի թագավորի կնկա հ'անկաշը, մարդ կղրկե, նես կտանի պառավին, կըսե.— Էս ժամանակ, դու ընչի՞ ես նստե խնամաքարին։

Պառավը կըսե օր.— Էկեր եմ աղջիկդ ուզեմ տղիս։

— Պառավ, ես աղջիկ չունիմ, ու էն երգն օր դու կերգեիր, իմ անբաղդ աղջկա երգած ու իմ էլ սիրած երգն է, ո՞րտից գիտես էդ երդը։

— Քու աղջիկն է ընձի սորվցուցե, Սիմիզարը, էս պատկերքն էլ ինքն է տվե,— ու կպատմե, թարիֆ կէնե ինչ օր գիտե։

Էս օր կըսե, թագավորի կնիկը ուրախութենեն խելքը կէրթա։ Թուի կէղնին խղմատքյարները՝ թագավորին գիմացուն, կնկան ուշքի կրերեն, կառեթներով, ֆայտոններով կէրթան Ասլանին ու Սիմիղարին կբերեն պալատ։

Զարզանդ թագավորն ու իրան կնիկը շատ կուրախնան, թադարուք կտեսնին օր շատ վենձ պալ սարքեն, Ասլանին ու Սիմիզարին պռակեն։ Էս թադարուքի հետ էին, ձիապանները գուքան Ասլանին իմաց կուտան թե.— Էս էրկու օր է մե մոծակմ է փեյտա էղե, ձիուն դինչ չի թողե։ Ասլանը դուզե էրթա տեսնի, պառավը չի թողնի.— Ես կէրթամ,— կըսե։

Պառավն օր ավշանի էրկու ճուղ ձեռը նես կ'մտնի ու կվառե ճուղերը, մոծակը անհայտ կէղնի։

Պառավին լավ օթաղ ու խըզմատքյար էին տվե, ու բիրադիքը շատ պատիվ կուտային։ Էս գիշեր պսպուվը իրան օթաղը կթողե ու, եվոր բիրադի կքնին, Ասլանի օթաղի դուռը կբանա, նես կմտնի, լամբերը կանցու, մե իրեք մատնանի էրկաթմ՝ թիզմ պոչով ձեռը քոնած, կնստի ու բանիմ կ'բակլայե։

Կես գիշեր անցեր էր, մեկ էլ մե ֆըշշոցմ կլսե. կտեսնի, էս է էկավ՝ ընչին օր ինքը կբակլայեր, մե սև, վիշապի պես օձմ, սողալով կէրթա Ասլանի ու Սիմիզարի կառավաթի թարաֆը։ Պառավը ձեռքի իրեք մատնանին կկոխե օձի թափի մեջ տեղը. օձը կՃվա ու կսատկի։ Ճչոցից Ասլանն ու Սիմիզարը կզարթնին, պառավը էսոնց կպատմե օր օձը դևի մերն էր, մոծակ էր դարձե, ինքը օր գնաց գոմը, էնտից փախավ, հիմի էլ, ինչրխ օր կտեսնին դարձեր էր օձ, օր տղին ու աղջկան վնասեր։

Ասլանի ու Սիմիզարի օձի խեթելուց ազատվելուն շատ ու շատ ուրախցան թագավորն ու կնիկը, վենձ խարջ էրին, վենձ հրավերք սարքին, հարսնիք էրին օխտը զօր, օխտը գիշեր, Սիմիզարին պսակեցին Ասլանի վրա։

Թագավորը հալիվորցեր էր, իրան տեղը Ասլանին դրեց թագավոր, անունը դրեց՝ Եթում Ասլան թագավոր։

Էնոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։